տուած է այս աւանդութիւնս, կ'ըսէ հեղային
համար. «Աղէկ գեղեցիկ տեսակով էր, եր-
« կայնութիւնն 3300 կանգուն աւելի էր.
« Նոյեան ժամանակն կայր, յորժամ որ ջուրն
« աշխարհս ծածկեց. ջուրն մինչեւ ի մէջքն
« նորա եկաւ: Նոյ յորժամ նաւ կազմեաց,
« տախտակ և փայտ գտնալն յաճախեցաւ
« (պակսեցաւ ըսել կ'ուզէր). յՈւճ (Ովգ)
« գնաց ի Շամայ երկրէն. ուսմն երկու հատ
« ծառ եբեր, և այնով կատարեցաւ տապանն,
« և Աստուած փրկեաց զՆոյ ի ընկղմանէ »:
Ուրիշ առասպել այլ. Մովսէս խորայելացւոց
ցեղերը համբելէն վերջը, «յՈւճեցոնց վրայ
« նայեցաւ. գնաց քար մի գտաւ (Ուճն),
« կ'ուզէր որ բերէր խորայելացւոց ազգին
« վրայ ձգեր. այն քարն այնչափ մեծ էր...
« վերուց գլխուն վերայ զայն քարն. իմացաւ
« աստուածախօսն Մովսէս, գնաց գաւազա-
« նաւն ի ծունկն եհար յՈւճուն, սատակեց:
« Այս առասպելս ի Տաճկաց գիրն էր գրեալ,
« և անտի գրեցի. ապա ի մեր գրեանսն
« չի հաւատալի է նոցա առասպելեացն. և
« թէ գրէր որ զՏաճկացն առասպելն, բղտու
« մի բեռ գիրք կու լինար »: Բարեբաղդա-
բար Աբրահամ դիւրահաւատ չէ եղած
յայսմ մասին. բայց սակէ վերջ այլ յիշէ բ,
ժ, ժա, այլակերպներ, կէս մարդանման կէս
գազանաց և ուրիշ անասնոց կերպ. յետոյ,
ժբ գրէ. «Խալիֆէն Մէքղիտար՝ Պուլկար
« պարոնին դեսպան գնաց. ասաց, թէ անդ
« մարդ մի տեսայ, 12 կանգուն երկայնու-
« թիւն ունէր. Պուլկարաց պարոնն ասաց,
« Այս մարդս ծով որ կանգնի, մէջն չի
« հասնիր, (անշուշտ յեզերք ծովուն, ոչ ի
« խորս). չի գիտեր ո՛ր աշխարհէ է, չէր
« խօսիր, և բան մի չէր ուզեր, յետոյ մե-
« ռաւ: — Պատմեաց մեզ օր մի Շաֆի հին
« շեխն. խաէրիմ? աշխարհէ մարդ մի տե-
« սայ, մէջէն ի վայր մէկ՝ մէջէն ի վեր
« երկու մարդ լինի որ կու կռւին և պա-
« տերազմին մին հետ միմեանց. լինի որ կու
« հաշտին: Ժամանակաւ մի այլվի գնացի
« այն աշխարհն. ասացին թէ՝ այն մարդոյն
« մէկն մեռաւ. յայնժամ անցաւ այն մարդն,
« տեսայ որ մէկ էր մնացեր, մէկն չկայր »:
Նոր ժամանակում այլ այսպիսի հրէշք տես-
նուած են, բայց մէկուն մեռնելէն վերջը
միւսն այլ շուտով մեռած է:

Ձկունք յետին բաժին են կենդանեաց՝
Աբրահամու գրոց մէջ. ի վերնագրին կ'ըսէ.
« Ի սկիզբն արարացուք ծովային Ձկանց և
« Ժըժմըկաց, և այլ ցեղուցեղ անասնոց և
« գազանաց: Ասեն, թէ 600 ազգ կենդա-
« նիք ի ծովն կան, և 400 ի ցամաքն. զի
« հազար ազգ կենդանիք ստեղծեալ է Աս-
« տուած »: Այսչափ Ձկանց ազգերէն՝ նախ
յիշէ չորս տեսակ. « Ձուկն որ ի Թունայ
« (Գանուբ) ջուրն կու լինի, այսոքիկ են.
« ա. Մոռընայ» (Մուրինա). բ. Մէրսին.
գ. Սազան. դ. Եային. մէկ մէկ երես բան
գրէ առջի երկուքին վրայօք, միւս երկուքին
աւելի կարճ. լսենք առաջինն. «Մոռընայ
« ձուկն մեծ է, մինչեւ 40 կանգուն կու
« պտտնի. առանց թեփի է և գէր է, և
« մարդոյն վնաս չի աներ. միսն անուշ է.
« լինի որ տասն կանդառ ձու կու հանեն ի
« միջէն, և զայն աղով կու խառնեն և այն-
« պէս կու պահեն. զոր խաւեար անուանեն,
« և լնուն ի փուչիքն (տակառ), և բերեն ի
« Ըստամպօլ. 10 տիրհէմ՝ սպիտակ մի ծախեն,
« և տանին ի Ֆռանգստան, 5 տրհմ. (տիրէմ)
« սպիտակ մի կու ծախեն, և զմիսն կու չոր-
« ցրնեն և մուխ կու կախեն, և չոր միսի
« նման կու ծախեն: Եւ այլ. թէ զմիսն
« տապկես կիթով կամ շուրլայ եփես քա-
« ցախով և զաֆրանով, անուշ կու լինի:
« Եւ այլ. թէ ի վերայ քօսին (կրակախտն
« մարմի) սխտորով և քացախով եփած տաք
« տաք ի վերայ լնուս, այն այլ անուշ կու
« լինի »:

Մէրսինի համար կ'ըսէ. «Այս այլ Թունայէն
« կու ելանէ. մինչեւ 3 կանգուն կու գտանի,
« և որպէս, զփուշ ոսկր ունի ի կռնակն:
« Ձուն կու հանեն, աղով խառնեն և պա-
« հեն. ի մէջ ոչխարի փորուն կու լնուն, և
« այնպէս տանին աշխարհէ աշխարհ. և դարայ
« (սեւ) խաւեար անուանեն. այսոր խաւեարն
« ա՛յլ ազնիւ է քան զՄոռընայ ձուկանն:
« Հռոմոց և Ֆռանգաց մեծ կերակուրն պահոց
« և ուտուց՝ այս է. և պատրիարքն և ե-
« պիսկոպոսունքն և խաբեղայքն նոցա՝ պա-